600.0264.27.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2018 թվականի №264Ա

քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՎԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր ՍԵՎԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ 2018 թվականի հունիսի 18-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել անհատ ձեռնարկատեր ՍԵՎԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ հայտը և Գեղարքունիքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրել 5560-5565ՄՀց ռադիոհաճախակա-նությունների հատվածի օգտագործման թույլտվություն՝ մինչև 2026 թվականի հունիսի 22-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել անհատ ձեռնարկատեր ՍԵՎԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ Գեղարքունիքի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրվող 5560-5565ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտա-գործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Անհատ ձեռնարկատեր ՍԵՎԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել

սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունիսի 28-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
27 հունիսի 2018թ.